ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՀԱՅ ՖՈՒՏԲՈԼԱՍԵՐ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Կարևորելով ֆուտբոլի շարունակական զարգացումը, գիտական հետազոտությունների համատեղ իրականացումը և արդյունքների ներդրումն ի շահ Հայաստանի Հանրապետության.

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը համատեղ գիտագործնական և հետազոտական միջոցառումների և սեմինարների կազմակերպման համատեքստում.

Ձգտելով զարգացնել համագործակցությունը ոլորտի որակյալ մասնագետների պատրաստման, ֆուտբոլի մասսայականացման և համատեղ մարզական միջոցառումների կազմակերպման միջոցով,

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն Հուշագրով համագործակցության շրջանակներում «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետև՝ Ինստիտուտ) «Հայ ֆուտբոլասեր բժիշկների ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը (այսուհետև՝ Ասոցիացիա) աջակցում է կազմակերպել ֆուտբոլի առաջնություններ, կազմել մարզումային ծրագրեր և իրականացնել մարզումային գործընթացը, իսկ Ասոցիացիան իր պատրաստակամությունն է հայտնում իրականացնել մասնագիտական խորհրդատվություն՝ ընդհանուր առողջապահական և նեղ մասնագիտական բժշկական ոլորտներում:

2.2 Ինստիտուտը պատրաստակամ է ֆուտբոլի մարզումներ կազմակերպելու համար տրամադրել փակ մարզադահլիճներ, աջակցել մարզումների անցկացմանը, տրամադրել մարզիչներ, իսկ համատեղ առաջնությունների կազմակերպման համար՝ մրցավարներ: Իր հերթին Ասոցիացիան պատրաստակամ է գործուն աջակցություն

ցուցաբերել Ինստիտուտի աշխատակիցների և ուսանողների վիրաբուժական և ուռուցքաբանական խորհրդատվության տրամադրմանը՝ մասնագիտական բժշկական հաստատությունների բուժանձնակազմի միջոցով:

2.3 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.3.1 Կողմերի ներկայացուցիչներից կազմված համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, համատեղ գիտական հոդվածների տպագրման աշխատանքներում,

2.3.2 Ներդրումային, նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման գործում,

2.3.3 Առողջ ապրելապերպի վերաբերյալ գիտական համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման գործում,

2.3.4 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման ուղղությամբ,

2.3.5 Սույն Հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության՝ մարզաբազաների, տարածքների և գույքի օգտագործման շուրջ,

2.3.6 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, հետազոտությունների և փորձաքննությունների իրականացման ուղությամբ,

2.3.7 Ֆուտբոլի միջբուհական առաջնությունների կազմակերպման և իրականացման աշխատանքներում,

2.3.8 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու շուրջ,

2.3.9 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող՝ Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության և համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները կատարվում են փոխադարձ համաձայնությամբ և համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:

4.5 Հուշագիրի խզման դեպքում Կողմերը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն արդեն իսկ սկսված միջոցառումներն արագ և կանոնավոր ավարտին հասցնելու համար:
4.6 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2025 թ. մարտի 11–ին :
4.7 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5" Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Ասոցիացիա**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Հայ ֆուտբոլասեր բժիշկների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Երևան, Կոմիտասի պող" 44, բն"36
Ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան	Նախագահ՝ Խաչատուր Բաղալյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.